

րացիկը՝ մօտենալու ողորմութեան համար (52): — Զանազանութիւն կար նաեւ ընչեղին այդ «տան» (անդ) եւ ազնուականին «ապարանից» մէջ (Եղիշ. 174. Փրպ. 27): Եթէ առաջինն առատութեամբ կը պարծէր, երկրորդն ադոր վրայ կը յաւելուր նաեւ կարգ, արուեստ, շնորհք, ազնուութիւն ու փափկութիւն: Հարկաւ մեք պիտի բաղձանք ամենէն յառաջ եւ ամենէն աւելի այս վերջին բնակարանին մէջ թարթափիլ, ինչպէս կը պահանջէ իւր նկարագրին ճոխութիւնն ալ, եւ ասոր հետ համեմատութեան մէջ տեսնել այլոց տարբերութիւնը՝ որքան կը ներէ մեզ պատմութիւնը:



Ա. ՇՏԵՄԱՐԱՆ

1. — Վայրը. — Հո՛ւս պէտք է որ այցելենք նախ, կերակրոյ նիւթերուն առաջին եւ իսկական աղբիւրը: Աւետարանի մեծատունն ունի «չտեմարան», որոց մէջ հաւաքած է «զցորեան եւ զամենայն բարութիւնս» (Ղկ. ԺԲ, 18): Նոյնպէս կը կոչեն զայս նաեւ Ոսկեբերան (Թղթ. Ա, 127), եւ Ազաթանգեղոս՝ որ կ'ըսէ՝ թէ «լի են շտեմարանք այսր թագաւորիս» երկնաւորի (376), ինչպէս լի էին Հայոց արքայինը: